ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՊՐՈՒՄԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ
(Հ. Էդոյանի պոեզիայի օրինակով)

ՀՌԻՓՍԻՄԵ ԶԱՔԱՐՅԱՆ

Արվեստի ցանկացած ճյուղի ստեղծագործության գեղարվեստական ազդեցության հավանական պատճառները թաքնված են անգիտակցականի մեջ, և հարկ է դրանք փնտրել հեղինակի կողմից օբյեկտիվորեն տրված ձևի և բովանդակության մեջ: Այս միտքը դիտարկել էր դեռևս Կարլ Գուստավ Յունգը, որը արվեստը բաժանել էր երկու տիպերի՝ հոգեբանական և տեսողական: Ըստ նրա՝ տեսողականությունը «իրական սկզբնական ապրումներն են, <…> իրական խորհրդանիշը, այլ կերպ ասած՝ անհայտ էության արտահայտման ձևը»[1], որտեղ «ձևը», լինելով անհատական՝ չկրկնվող, որոշվում է տվյալ ստեղծագործողի անհատականությամբ, իսկ «բովանդակությունը» ասես տրվում է ստեղծագործողի անհատականության սահմաններից դուրս՝ խորքային անգիտակցականում:

Հենրիկ Էդոյանի բանաստեղծական «ես»-ին և բանաստեղծական աշխարհին ներհատուկ առանձնահատկությունները վերաբերում են անձի ինքնաճանաչման և ինքնորոշման խնդրին, որի կարևոր տարրերից մեկն էլ կենսագրական և վերապրումի հիշողությունների հարաբերակցության խնդիրն է:

Կարլ Յունգի պնդմամբ՝ երբեմն հեղինակի անձնական կենսագրության առանձնակի պահերի գիտակցված պատկերումը, երբեմն էլ հիշողության խորքերում պահված համամարդկային հոգևոր կենսափորձի բազմաթիվ շերտերին ինտուիտիվ իմացությամբ անդրադառնալն է պոետին տանում դեպի հեռուների հեռուն, դեպի նախասկիզբ, որտեղ և ձևավորվել է կոլեկտիվ անգիտակցականը: Կոլեկտիվ անգիտակցականը մարդկության, անգամ մեր մարդանման նախնիների կորած հետքերի հիշատակների գաղտնի շտեմարան է, որտեղ ամփոփված մտքերն ու զգացմունքները մարդկային էվոլյուցիայի հետքերն են, հետևաբար համամարդկային են և փոխանցվում են միակերպ՝ ժառանգաբար:

Կարլ Յունգն առաջ քաշեց վարկած, ըստ որի՝ կոլեկտիվ անգիտակցականը բաղկացած է առաջնային հոգեբանական հզոր պատկերներից՝ արքետիպերից: Դրանք սիմվոլներ են, որոնց խորքային ար-

[1] **Юнг К. Г.** Феномен духа в искусстве и науке. М.: "Ренессанс", 1992, с. 135-136.

մատները ձգվում են դեպի հնագույն մշակույթ, դեպի արքետիպային մտածողություն, իսկ ավելի լայն իմաստով՝ արքետիպը մշակութային ժառանգված գեն է[2]:

Կոլեկտիվ անգիտակցականը, ըստ Կարլ Յունգի, բաղկացած է արքետիպերի կոնգլոմերատից և անգիտակցական միֆաբանության այն ոլորտն է, որի կերպարները հանդես են գալիս որպես համամարդկային ժառանգության բաղադրիչ տարրեր, որոնք ենթագիտակցության մեջ ակտիվանում են պատկերավոր ստեղծագործելու ընթացքում: Այն իր բնույթով թաքնված հոգեբանական համակարգ է, որը մարդկային փորձը սերնդեսերունդ անգիտակցաբար փոխանցող աղբյուր է: Մարդկային հոգեբանության այս շերտի ձևավորման ակունքները սկսվում են դեռևս սաղմնավորման պահից: «Վերլուծական հոգեբանության և բանաստեղծական-գեղարվեստական ստեղծագործության կապի մասին» աշխատությունում Յունգը կոլեկտիվ անգիտակցականի ոլորտն առանձնացնում է անձնական, անհատական անգիտակցականից և այն սահմանում է որպես հոգեբանական գործընթացների որոշակի ամբողջություն, որոնք ֆիլոգենետիկ զարգացման ընթացքում հասել են մարդկային անհատականության գիտակցական շերտերին, իսկ երբեմն էլ իրենց անհամատեղելիության պատճառով դուրս մղվել և մնացել օնտոգենետիկ ոլորտում: Այս ոլորտում պահպանված բազային հիշողությունը այն տեղեկատվական դաշտն է, որն արվեստը սնող աղբյուրներից մեկն է. բոլորն ունեն գիտակցության այդպիսի շերտ, որը, մարդու կամքից անկախ, ազդում է գիտակցության բովանդակության վրա. «Անգիտակացական պլանը ամբողջությամբ պասսիվ չէ. այն իր մասին իմաց է տալիս՝ յուրովի ազդելով գիտակցության բովանդակության վրա»[3]:

Էդոյանի պոեզիայում սերտորեն միահյուսվում են գիտակցականն ու անգիտակցականը, բանականն ու զգայականը, որոնք միասին ամփոփելու դեպքում կարելի է ասել, որ նրա ստեղծագործական անհատականությունը սերտորեն միահյուսվում է անձնական կյանքին, սակայն նաև նկատելիորեն վեր է բարձրանում այդ միահյուսումից, որովհետև «անգիտակցականը հրաշալի տիեզերքն է՝ բաղկացած անտեսանելի էներգիաներից, ուժերից, մտքի ձևերից, անգամ մեր ներսում ապրող առանձին անհատականություններից»[4]: «Այն ամենը, ինչով ապրում է աշխարհը, և ինչն ապրում է աշխարհում, իր արձագանքն է գտնում պոետի համայնապարփակ կրծքում և երկրիս երեսին»[5], միայն նա է զգում և արտահայտում այս գաղափարն իր ստեղծագործության

---

[2] Տե՛ս նույն տեղը, 1992, էջ 128, 129.

[3] **Юнг К. Г**. Архетип и символ. М.: "Ренессанс", 1991, с. 45.

[4] **Джонсон Р. А.** Сны. Воображение. Внутренняя работа. М.: "Класс", 2010, с. 9.

[5] **Վ. Գ. Բելինսկի, Ն. Գ. Չերնիշևսկի, Ն. Ա. Դոբրոլյուբով**, Ընտիր էջեր, Եր., «Սովետական գրող» հրատ., 1980, էջ 28:

մեջ: Երբեմն ինքնաբացահայտման, ինքնաճանաչման և ինքնահաստատման ճանապարհին պոետը, ներթափանցելով արքետիպային պատնեշից՝ խորքային հիշողությունից, այն կողմ, արթնացնում է կոլեկտիվ անգիտակցականի ոլորտը և այնտեղ փորձում գտնել անբացատրելիի պատասխանները՝ ո՞վ է Աստված, ո՞վ է մարդը, և որտեղի՞ց է նա, ի՞նչն է առաջնային՝ մատերիա՞ն, թե՞ իդեան.

Բանաստեղծները անցյալն են գուշակում, ապագան
փակ է նույնիսկ նրանց համար: Եվ ես չգիտեմ՝ որտեղի՞ց եմ
գալիս՝ անցյալի՞ց, ապագայի՞ց, գուցե
ոչ մի տեղից-(որտե՞ղ է Ոչ մի տեղը)-և ո՞ւմ պիտի տամ
ձեռքիս ճյուղը կանաչ-
իմ կյանքը,
Ոչ մեկի՞ն, որին
չեմ հանդիպել....[6]

Յուրաքանչյուր ազգային մշակույթ ունի սեփական էթնոմշակութային արքետիպերը, որոնք իրենց դրոշմն են թողել տվյալ ժողովրդի աշխարհայացքի յուրահատկությունների, բնավորության առանձնահատկությունների, պատմական ընթացքի և գեղարվեստական ստեղծագործության վրա: Էթնոմշակութային արքետիպերում խտացված են ժողովրդի կոլեկտիվ փորձն ու մշակութային ժառանգությունը, որոնք արտահայտում են ոչ միայն անցյալի փորձը, այլև ժողովրդի՝ ապագայի հանդեպ ունեցած երազանքը: Այդ արքետիպերի ակտիվ գործածությամբ է պայմանավորված ազգային մշակույթի ինքնության և ամբողջականության պահպանումը: Առավել մանրամասն ուսումնասիրված են երազների, երևակայությունների, վախերի, գեղարվեստական ստեղծագործություններում ընդգրկված մշակութային արքետիպերի դրսևորումները[7]:

Ըստ Կարլ Յունգի՝ կոլեկտիվ անգիտակցականը բնածին բնազդների ամբողջություն է, որոնք գիտակցությունից անկախ գոյություն ունեն յուրաքանչյուր մարդու հոգեկանի խորքային շերտերում: «Մեր հոգիները, ինչպես մարմինները,- գրել է Կարլ Յունգը,- բաղկացած են նույն տարրերից, որոնցից կազմված էին մեր նախնիների մարմիններն ու հոգիները»[8].

Լռությունը նույնն է, տարբեր են խոսքերը,
նույնն է գիշերը, բայց երազները
նման չեն իրար:
Նույն դեմքն է մարդու,
բայց տարբեր են նրա արտացոլումները...
....ոչ ստվերային իրականություն-

---

[6] **Հ. Էդոյան**, Ընտրանի, Եր., Հայագիտակ, 2016, էջ 722:
[7] Տե՛ս **Юнг К. Г.** Душа и миф. М., 1997, էջ 92:
[8] **Юнг К. Г.** Архетип и символ, с. 45.

ուր ձուլված են իրար
պատկերն ու շրջանակը, ինչպես մի անգամ
Դանտեն է տեսել այն
իր մի հավերժական ակնթարթի մեջ[9]:

Սա նշանակում է, որ մարդու ֆիզիկական գոյությունը պայմանավորված է կոլեկտիվ անգիտակցականի գոյությամբ: Ըստ Յունգի՝ մարդկային հոգեբանությունը նման է երկրագնդին: Այն բաժանվում է երեք շերտի. ամենավերին շերտում, որը նման է երկրակեղևին, տեղակայված է մարդու գիտակցությունը: Գիտակցության շերտի տակ ամփոփված է ճնշող կամ մոռացված անհատական զգացմունքների, հիշողությունների, վարքագծային ձևերի առավել լայն շերտ, որը Յունգն անվանել է **անհատական անգիտակցական**, իսկ դրա տակ ամբողջացված է մարդու հոգեբանական կառուցվածքի հիմքը՝ կոլեկտիվ անգիտակցականը, որը լեցուն է հնագույն պատկերներով, վարքային ռեակցիաներով, և որը մարդկության պատմության մեջ կրկնվում է բազմիցս. «Կոլեկտիվ անգիտակցականը պարունակում է մարդկային էվոլյուցիայի ողջ հոգևոր ժառանգությունը՝ վերածնված յուրաքանչյուր անհատի ուղեղի կառուցվածքում»[10]:

Յունգը փաստում է, որ մարդը կարող է չգիտակցելով անդրադառնալ անգիտակցականի այն արքետիպերին, որոնք երևակայությունների, երազների, հույզերի արքետիպային մոդելներ են: Նա առանձնացնում է մանկան արքետիպը, որին հաճախ հանդիպում ենք տարբեր գեղարվեստական ստեղծագործություններում: Մանկան արքետիպը կապված է անձի անգիտակցականի այն շերտին, որտեղ պահվում են մանկության հիշողությունները և ակտիվանում են երեխաներին վերաբերող հուզիչ պատմություններին առնչվելիս: Հենց այդ ժամանակ է, որ մարդն անգիտակցորեն պահանջ է զգում իր հոգու ողջ նվիրումով ու ջերմությամբ հաղորդակցվելու իր «ներքին» երեխայի հետ: «Հիշողություններ, երազանքներ և մտորումներ»[11] ինքնակենսագրական գրքում Յունգը պատմում է իր ներսում գտնվող երեխայի և իր զարմանալի ծանոթության մասին. այն մասին, թե ինչպիսի աննկարագրելի հետք է թողել այդ ծանոթությունը իր ճակատագրի վրա: «Ես հիշեցի այն ժամանակը, երբ ես իննից տասնմեկ տարեկան էի <…>: Ես, ինչպես հիմա, տեսա իմ պատրաստած տնակներն ու ամրոցները, որոնց դարպասներն ու կամարները կառուցված էին շշերից <…>: Ի զարմանս ինձ՝ այդ հիշողություններն իմ հոգում ինչ-որ խորը թրթռուն զգացողություն առաջացրին: «Այո՛, ասացի ինքս ինձ, - այս ամենն ապրում է իմ ներսում: Իմ ներսի երեխան չի մահացել և լեցուն է ստեղծագործական էներգիա-

[9] **Հ. Էդոյան,** Ընտրանի, էջ 675:

[10] **Юнг К. Г.** Личное и сверхличное, или Коллективное бессознательное. М.: "Приор", 1999, с. 37.

[11] Տե՛ս **Юнг К. Г**. Воспоминания, сновидения, размышления // http://lib.ru/PSIHO/JUNG/memdreamrefs.txt

յով, որի պակասը ինքս զգում եմ…»: <…> Ես պետք է գտնեի հետադարձ ճանապարհ դեպի իմ մանկությունը և մանկական զվարճանքները: Դա իմ ճակատագրում շրջադարձային պահ էր»[12].

....կյանք առանց լռության,
լռություն առանց ուժի,
կինոֆիլմ կադրից դուրս,
պտտվող մի սյուժե-
դեպի ետ, դեպի սկիզբ,
ուր մի երեխա
փնտրում է ճանապարհը
դեպի Սուրբ Քաղաք[13]:

«Օր առանց հանդերձանքի» բանաստեղծության մեջ կյանքը «պտտվող մի սյուժե է», որտեղ ժամանակը ներկայից անցյալ է հոսում, և տարածաժամանակային չափման միավոր ճանապարհը բանաստեղծական սուբյեկտի ներքին երեխայի անհանգիստ վիճակը սփոփող ու դեպի հաստատուն տարածություն՝ Սուրբ քաղաք՝ հավատի հավերժություն տանող խորհրդանիշն է:

Տարբեր ժողովուրդների կրոնական հավատալիքներում հանդիպում ենք «երկնային արքետիպեր» հասկացությանը, ըստ որի՝ ամեն երկրային երևույթ՝ վերացական կամ կոնկրետ, համապատասխանում է ինչ-որ երկնային, աներևույթ կերպարի, «մտահղացման», և որ յուրաքանչյուր առարկա, ցանկացած հասկացություն ներկայացվում է երկակի ասպեկտով: Գոյություն ունի տեսանելի և անտեսանելի երկիր: Մեր երկիրը համապատասխանում է երկնային երկրին, և այն ամենը, ինչը կատարվում է այստեղ՝ երկրի վրա, ունի իր երկնային կրկնօրինակը, որն իսկական իրականությունն է՝ տարին, աղոթքը, բառերը և ամենը, ինչն ի հայտ է գալիս երկրի վրա, և միաժամանակ ունի իր երկնային արքետիպը[14].

Երկու կղզիներ
ներքևում վերևում
կամ իրար կողքի
կուզեի այնքան
աննկատ անցնել
մի կղզուց մյուսը
որ նույնիսկ մի ալիք
ջրի վրա չշարժվեր[15]:

Հենրիկ Էդոյանի պոետիկայում աշխարհընկալման տարածական

---

[12] Մեջբերումն ըստ՝ **Милл Дж., Кроули Р.** Юнг и "внутренний ребенок" - Терапевтические метафоры для детей и внутреннего ребенка // https://www.psyoffice.ru/8/ psichology/book_o105_page_17.html

[13] **Հ. Էդոյան,** Ընտրանի, էջ 675:

[14] Տե՛ս **Элиаде М.** Космос и история. М.: "Прогресс", 1987, էջ 34:

[15] **Հ. Էդոյան,** Ընտրանի, էջ 674:

միավորների հոլովումից կարելի է ենթադրել, որ նա անդրադարձել է կոլեկտիվ անգիտակցականին: Այդ տարածական միավորները ձևավորվում են դեռևս նախածննդյան հիշողության խորքերում, որոնք, դուրս գալով արքետիպային կաղապարից, ընդարձակում են իրենց սահմանները, որոնց մեջ ծավալվում է ողջ տիեզերքը: Հենց այդ սրբազան անսահմանության սրտում է բանաստեղծի և նրա ներդաշնակություն փնտրող հոգու տեղը՝ աշխարհի «երկու կղզիներում»:

«Դեռևս առավել համոզիչ է մնում այն պնդումը, որ մեր ինքնությունն անցյալում է»[16], իսկ Էդոյանի նախածննդյան հիշողության արմատներն այնքան խորն են, որ, փոխանցվելով հետծննդյան հիշողությանը, անխոչընդոտ դարձել են նրա ինքնագիտակցության և ինքնահաստատման սնուցման աղբյուրները.

Արդյոք կապրե՞մ այնտեղ,
այն տանը, ծաղիկների
և խոտերի մեջ, ստվերի տակ երիտասարդ,
բուռն ժամերի...
...Սիրելի դեմքեր, որոնց հետ այլևս
ոչ հրաժեշտ կա և ոչ բաժանում[17]:

Տան արքետիպն ընկալվում է որպես անհատի ներքին աշխարհի կենտրոն, որպես «հոգևոր ամբողջականության խորհրդանիշ»[18]. այն սեփական մտքերի և հույզերի ամփոփման, արտաքին աշխարհից կտրվելու և սեփական «ես»-ի հետ ներանձնանալու վայր է: Տնից է սկսվում ու ավարտվում կյանքը: Այն վկան է ծննդի ու մահվան և կապում է այլ աշխարհն իրական աշխարհին: «Հիշողության հետ է կապված <…> անցյալին հավատարիմ մնալու հավակնությունը»[19]: Տունն ամփոփում է հիշողություններ ու մոռացություններ, կրում է ազգային ավանդույթներ: Այն հոգևոր տաճար է, ընտանիքի հոգևոր միասնության խորհրդանիշը, սերունդներին իրար հետ կապող սրբատեղի: Տնից է սկսվում հայրենիքը, որի կանչը գալիս է կոլեկտիվ անգիտակցականի խորքերից. այն մեր նախնիների կանչի արձագանքն է՝ պահպանված նախահիշողության շտեմարանում:

Ցավոք ներկայում չկա ամբողջական ամփոփ խոսք նախահիշողության[20] մասին: Նախահիշողություն ասելով՝ մենք հասկանում ենք անգիտակցականի խորքերում պահված կերպարներն ու կոլեկտիվ անգիտակցականի խորքերից եկող արքետիպերը կրելու մարդկային

---

[16] **Анкерсмит Ф. Р**. Возвышенный исторический опыт. М.: "Европа", 2007, с. 435.

[17] **Հ. Էդոյան,** Ընտրանի, էջ 484:

[18] **Юнг К. Г.** Воспоминания, сновидения, размышления // http://lib.ru/PSIHO/JUNG/memdreamrefs.txt

[19] **Рикер П.** Память, история, забвение. М.: Издательство гуманитарной литературы, 2004, с. 44.

[20] Տե՛ս **Макаров А. И.** Феномен надындивидуальной памяти. В.: «ВолГУ», 2009, էջ 111-127:

հոգու ներուժը.

Ես հիշում եմ, հիշում եմ, հիշում,
հիշում եմ մի դեմք ապակու դեմ կանգնած,
հիշում եմ երկու ձեռքեր գրպանների մեջ,
հիշում եմ մի փողոց երկար, երկար,
և հետո հիշում եմ,
իմ անունն եմ հիշում,
որը հագել եմ չմրսելու համար[21]:

Այսպիսով, կարելի է ասել, որ կենսագրական և վերապրումի հիշողությունները տիեզերքի դրոշմն են անհատի գիտակցության վրա: Մեր պատկերացմամբ՝ կենսագրական հիշողությունը գիտակցական հղում է սեփական կյանքին և նախորդ սերունդների կյանքին վերաբերող տեղեկատվությանը: «Ես հիշում եմ», «Սիրելիս, մենք եղել ենք» և Էդոյանի մի շարք այլ բանաստեղծություններում քնարական «ես»-ի ապրումները փաստում են դեժավյուի ֆենոմենը, այն, որ «կկրկնվի ամեն ինչ՝ տիեզերքում թողնելով նույն ծանոթ հետագիծը déjà vu...»[22].

...Մենք այնտեղ մնացել ենք, մենք այնտեղ մեր վերջին
երազն ենք տեսել, մեզ այնտեղ աստվածները
անուն են տվել, մեզ նրանք
պահել են իրենց քնի մեջ
կենդանի և արթուն, ապրելու իրար հետ
ջրերի մեջ քարացած և անշարժ գետի:
Սիրելիս, մենք եղել ենք, եղել[23]:

«Դեժավյու»[24] տերմինն առաջին անգամ առաջ է քաշել ֆրանսիացի հոգեբան Էմիլ Բուարակը: Այն թարգմանաբար նշանակում է «նախկինում տեսած»: Դեժավյուն զգացողություն է, երբ թվում է, թե ներկայի իրադարձություններն արդեն կատարվել են նախկինում, այսինքն՝ ներկան եղել է անցյալում: Թեպետ անցել է ավելի քան հարյուր տարի, սակայն այս երևույթի մասին դեռևս չկա հիմնավորված համոզմունք և բավարար բացատրություն: Տարբեր գիտություններ տարբեր մեկնաբանություն են տալիս դեժավյուի ֆենոմենին. հոգեբույժներն այն կապում են էպիլեպսիայի հետ, ոմանց կարծիքով՝ այն կապված է վերամարմնավորման հետ, ոմանք այն համարում են երազների արդյունք, իսկ ֆիզիկոսների դիտանկյունից այն ընկալվում է որպես ժամանակի խախտում, երբ անցյալը, ներկան և ապագան հայտնվում են միաժամանակ: Դեժավյուի ֆենոմենին անդրադարձել է նաև Կարլ Յունգն իր «Հիշողություններ, երազանքներ և մտորումներ» աշխատության մեջ:

---

[21] **Հ. Էդոյան,** Ընտրանի, էջ 31:

[22] **Ֆ. Բախչինյան,** Déjà vu, Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2015, էջ 22:

[23] **Հ. Էդոյան,** Ընտրանի, էջ 481:

[24] Տե՛ս **Стоименов Й. А., Стоименова М., Й., Коева П. Й.** и др. // Психиатрический энциклопедический словарь. Киев: МАУП, 2003, էջ 256-257:

Ըստ Յունգի՝ այն հիշեցնում է երազի պատրանք, որն էլ ենթադրում է այլ կյանք: Դեժավյու առաջին անգամ Յունգն ապրել է դեռևս 12 տարեկան հասակում, որից հետո համոզվել է, որ ապրել է մեկ այլ կյանք: Նրան ապշեցրել է այն փաստը, որ 18-րդ դարում ապրած մի բժշկի նկարում ճանաչել է իր կոշիկները և եկել այն համոզման, որ նկարում պատկերված բժիշկը հենց ինքն է, և հենց դա է պատճառը, որ սեփական ծննդյան տարեթվի՝ 1875-ի փոխարեն ձեռքն իր կամքից անկախ հաճախ գրել է 1776[25]:

Պատմությամբ ավանդված գենետիկ հիշողությունը Էդոյանին տանում է դեպի սեփական արմատները.

Նրանք գնում են-մեր արյան մեջ թողած
Հիշատակներն իրենց...[26]

«Իր անմիջական ձևով ապագան անծանոթ, մութ, անանցանելի, զգայական նյութ է, որն ըստ էության անցողիկ է, քանի որ այն անկատար է, քանի որ այն դեռ չի իրագործվել. հետևաբար՝ այն պետք է անցնի, որպեսզի իրագործվի»[27]: Այսպիսով, ապագայի ողջ իմաստն այն է, որ այն անցյալ դառնա. «Քանի որ ցանկացած գոյություն, հեռանալով ապագայից, նրա անորոշ նյութի զգայունությունից, վերածվում է իր հավերժական իմաստի հոգևոր հստակության, որը փայլում է անցյալից՝ իր լույսով լուսավորելով նաև ապագան, որն ինքնին մութ է»[28].

...Մենք հիշում ենք և հիշողության մեջ արթնանում,
մեզ կանչում են, և ձայնը հասնում է մինչև մեզ,
լույսը գալիս է ամենամոտ աստղից, բայց
մեր ձեռքի մեջ մնում է մեռած դիմակը աստղի[29]:

Նյութական աշխարհում մարդը գիտակցաբար կամ ենթագիտակցաբար ձգտում է փնտրել իր ինքնությունը: Իր «ես»-ի, սեփական նեռաշխարհի, կարողությունների և ցանկությունների անհատական որոնումը ազատության ճշմարիտ ուղի տանող ճանապարհն է, որը միշտ էլ ընթանում է կոլեկտիվ անգիտակցականի շրջանակներում: Հենց այդ ժամանակ է, որ արքետիպերն ազդում են անհատի կենսակերպի, վարքի ընտրության վրա և կարող են հիմնովին փոփոխել նրա անձնային հատկանիշներն ու իրականության ընկալման սկզբունքը: Ամեն անգամ, այս անհավատալի հոգևոր վերելքն զգալով, մարդն ասես գերազանցում է իրեն ու ավելին է դառնում, քան սովորական կյանքում է: Ինքնահաստատման յուրաքանչյուր փորձ կապվում է կոլեկտիվ անգիտակցականի առկայության հետ, որը հանդես է գալիս որպես կյանքի

[25] Տե՛ս **Юнг К. Г.** Воспоминания, сновидения, размышления // http://lib.ru/PSIHO/JUNG/memdreamrefs.txt

[26] **Հ. Էդոյան,** Բանաստեղծություններ, հատոր առաջին, Եր., «Վան Արյան» հրատ., 2010, էջ 260:

[27] **Бакунин П. А**. Основы веры и знания. М.: "Ленанд", 2016, с. 346.

[28] Նույն տեղում, էջ 347:

[29] **Հ. Էդոյան,** Բանաստեղծություններ, հատոր առաջին, էջ 260:

որոշակի դրվագների կատալիզատոր, որոնց արքետիպերը սահմանում են մարդկության զարգացման ընդհանուր վեկտորը: Արքետիպերը տարբեր սերունդների, մշակույթների պատմական որոշակի փուլերում ձեռք են բերում իրենց բնորոշ հատկանիշները, պատկերներն ու կյանքի իմաստները: Կարելի է եզրակացնել, որ արքետիպային իրականությունը ինչպես մարդկության պատմության զարգացման ընթացքում, այնպես էլ այսօր արդիական է: Տարբեր արքետիպերի և միֆաբանական կերպարների միջոցով Էդոյանը փորձում է բացահայտել իր ծագումը և «երկրային ժամանակն» ապրելու իր առաքելությունը.

Ես ելնում եմ Անդունդից ինչպես Ոդիսևս,
ինչպես Էնկիդու կամ Արա Գեղեցիկ,
որ պատմում էր իր տեսած աշխարհների մասին:
Ես ելնում եմ Անդունդից-իմ կյանքի նախկին
հետքերը թողած նրա խավարի մեջ...[30]

Վերոբերյալ բանաստեղծության մեջ աստվածներն արքետիպեր են, որոնք բարդ աշխարհում ապրելու կայուն արժեհամակարգ, հայացքներ, աշխարհայացք ձևավորող, բացարձակին ձգտող բանաստեղծական «ես»-ի խորհրդանիշն են: Խավարն անհայտությամբ սքողված կյանքի արքետիպն է, իսկ անդունդը՝ խորքային հիշողությունը: Ազատությունը բանաստեղծի տարերքն է, կյանքի իմաստը: Նա կատարյալին ձգտող ու հասնող անհատ է և գիտի, թե ով է ինքը, որտեղից է եկել, և որն է իր առաքելությունն այս կյանքում.

Ո՞վ է այս մարդը-այսքան հոգնած, այսքան
անհեռանկար օրվա մեջ չարչարվող,
որ սոսկ հոգսեր ունի,
ոտքերն առասպելի անդունդի վրա,
հագին գորշ-կանաչ թիկնոցն իր դարի,
աչքերը մթագնած կեղծիքի լուսարձակից...[31]

«Պերսոնան ընդամենը կոլեկտիվ հոգու դիմակն է, այն դիմակը, որը կեղծակերպում է անհատականությունը՝ պարտադրելով ուրիշներին և ինքն իրեն հավատալ, որ ինքն անհատականություն է, այն դեպքում, երբ նա ուղղակի դեր է խաղում, որի միջոցով խոսում է կոլեկտիվ հոգին»[32]: «Այս մարդը...» բանաստեղծության մեջ Էդոյանը նույնացնում է բանաստեղծական «ես»-ը ժամանակակից մարդու՝ որպես տիրող իրավիճակին չհաշտվողի հետ: Այս կոնֆլիկտը մետաբանաստեղծական մակարդակով կապված է հոգու և նյութի, կենցաղի և գոյության կոնֆլիկտի հետ: Այս իմաստաբանական կապը բացատրվում է նրանով, որ կոնֆլիկտի հիմքում կենցաղի և գոյության հակադրությունն է: Սակայն Հենրիկ Էդոյանի հերոսը՝ «ոտքերն առասպելի անդունդի վրա», «անհե-

[30] Նույն տեղում, էջ 262:
[31] Նույն տեղում, էջ 502:
[32] **Юнг К. Г.** Архетип и символ, с. 221.

ռանկար օրվա մեջ չարչարվող» «այս մարդը», իր մեջ ուժ է գտնում և գնում ավելի հեռուն՝ սկիզբների սկիզբ՝ դեպի «սուրբ ոլորտներ».

...Դու, միևնույն է, սահմաններ չունես.
քանի որ ապրում ես ոչ միայն քո մարմնի մեջ,
այլ նաև նրանից դուրս, անանուն մի վայրում,
ուր բոլոր քնածների աստղերն են լույս տալիս
իրենց սուրբ ոլորտներից
քո մտքի դաշտերում[33]:

Էդոյանի քնարական աշխարհում ընդարձակվում են արտաքին տարածության և պոետի հոգու «սուրբ ոլորտների» սահմանները, որոնք իրենց անսահմանության մեջ անգամ ներդաշնակ են: Վերոբերյալ օրինակը ենթադրում է, որ նախահիշողությունն իր բնույթով բազմատարր է, իսկ լույսը, որը գալիս է «անանուն մի վայրից», վերջնականապես ջնջում է բոլոր սահմանները և հիշեցնում համընդհանուրի մասին:

«Մշակույթի ուղիները» աշխատությունում Անդրեյ Բելին նշում է, որ անձի ենթագիտակցության մեջ գոյություն ունեցող կոլեկտիվ անգիտակցականի շերտերում՝ «Տիեզերքի տաճարում», պահված «Ես»-ը «անձի «Ես»-ը չէ, այլ միաժամանակ կոլեկտիվ «Ես»-ի, աշխարհի «Ես»-ի և մարդու «Ես»-ի հատումը»[34]. այս եռամիասնությունն էլ անձի իսկական «Ես»-ն է: Սա, ըստ Բելիի, մարդու բարձրագույն «Ես»-ն է՝ նրա ինդիվիդումը:

Սոցիալական կյանքում մենք ձգտում ենք ցույց տալու մեր «պերսոնան», իսկ մեր հոգեկանում ուղղված ենք դեպի մեր ինքնության բացահայտումը: Մեր ինքնության արքետիպի բարձրագույն սիմվոլն Աստվածն է: Արվեստի առաքելությունը սեփական «ես»-ի բացարձակացումն է: Միայն ստեղծագործող, արարող մարդը կարող է մոտենալ Աստծուն, քանի որ շարունակում է աշխարհակերտման աստվածատուր գործը. «....մեր «Ես»-ը մեզ է սպասում...: Ստեղծագործության միայն այս ձևն է, որ դեռ մեզ փրկություն է խոստանում: Այստեղ է գտնվում ապագա արվեստի ուղին»[35],- հաստատում է Բելին իր «Ապագա արվեստը» աշխատությունում: «Իմաստի խորհրդանիշները» աշխատությունում Բելին գրում է անձի ստեղծագործական «ես»-ի աստիճանական զարգացման փուլերի մասին. «...անհատական ապրումները ձգտում են ունիվերսալ դառնալու»[36], «անձնական «ես»-ի մեջ ապրում է «ես» հավերժականը....»[37]: Էդոյանական ստեղծագործական սիմվոլացման գագաթնակետն է դառնում նրա խորքային հիշողությունում պահված աստվածահայտնությունը, քանզի «Աստված մարդուն արարել է

[33] **Հ. Էդոյան**, Հենման կետ (բանաստեղծություններ), Եր., «Անտարես», 2015, էջ 69:
[34] **Белый А.** Символизм как миропонимание. М.: "Республика", 1994, с. 311.
[35] Նույն տեղում, էջ 144:
[36] Նույն տեղում, էջ 61:
[37] Նույն տեղում:

իր նմանությամբ և իր պատկերով»[38]: Յունգը, դիտարկելով իր իսկ անձի ներուժը, հանգել է նրան, որ Քրիստոսն է «ներկայացնում սեփական անձի արքետիպը»[39]: Իսկ աստվածահայտնությունը պայմանավորված է նրանով, որ անձի ներաշխարհում, կոլեկտիվ անգիտակցականում պահված է Աստծո պատկերը՝ սեփական «ես»-ի սուբստանցիան: Սակայն, Աստծուց հեռանալով, նրա պատկերը ակամայից դուրս է մղվում մարդու գիտակցությունից, և նա կորցնում է Աստծո պատկերի հետ ունեցած կապը: Միայն արարման գործընթացում է արթնանում խորքային հիշողությունը, և մարդը նույնանում է Աստծո կերպարին, որը «սեփական անձի կամ ամբողջականության ինքնաբուխ խորհրդանիշն է»[40]: Միայն ստեղծագործող Մարդն է աստվածացնում իր «ես»-ը՝ իր մեջ պահված Աստծո կերպարը, և հայտարարում. «....ես և Նա մեկ ամբողջություն ենք»[41]:

Հենրիկ Էդոյանի ստեղծագործությունն ընկալվում է որպես հավերժական հիշողության գիտություն, երբ մարդկային «ես»-ը, ձուլվելով մարդկային ցեղի պատմության պատմական հիշողությանը, հայտնվում է մի իրավիճակում, որտեղ «ես»-ի զգացմունքները նույնացվում են այն զգացողություններին, որոնք հարյուրավոր անգամ մարդիկ ունեցել են իրենից առաջ:

Այսպիսով, Էդոյանի բանաստեղծելու արվեստը արարման յուրահատուկ տեսակ է, զգացողության յուրահատուկ ձև, աշխարհընկալման բացառիկ եղանակ: Բանաստեղծն օժտված է անցյալը, ներկան ու ապագան իր արվեստով միավորելու բարձր վարպետությամբ և մասնակցում է աշխարհի վերստեղծման գործընթացին: Նա հավասարակշռություն է մտցնում տարբեր ժամանակների ու տարածությունների միջև և ձուլվելով, երբեմն էլ հակադրվելով իրականությանը՝ կարողանում է ընդլայնել աշխարհի մասին իր գիտելիքները, բարձրանալ նրա մասին ունեցած սովորական պատկերացումներից վեր և բացահայտել գոյության նոր եզրեր: Նա, երկնային բարձունքից աշխարհին նայելով և այն ներսից ուսումնասիրելով, իր արվեստով ներթափանցում է կյանքի բոլոր ոլորտները:

Բանալի բառեր – *արքետիպ, կոլեկտիվ անգիտակցական, խորքային հիշողություն, գիտակցություն, կենսագրություն, վերապրում, պատմություն, Հենրիկ Էդոյան*

РИПСИМЕ ЗАКАРЯН – ***Проблемы взаимодействия биографической и эмоциональной памяти (на примере поэзии Г. Эдояна).*** – В статье проанализировано, как отражены в поэзии Генриха Эдояна индивидуальное и коллективное

---

[38] Ծնն. 1:26, 27:

[39] **Юнг К. Г.** Избранное. Минск: "Попурри", 1998, с. 204.

[40] Նույն տեղում, էջ 204:

[41] **Белый А**. Символизм как миропонимание. М.: «Республика», 1994, с. 61.

бессознательное. Особенности, присущие поэтическому «я» Эдояна и его поэтическому миру, связаны с самопознанием и самоопределением личности. В этом ряду рассмотрено соотношение биографической и эмоциональной, чувственной памяти.

Ключевые слова: *архетип, коллективное бессознательное, глубинная память, сознание, биография, переживание, история*

HRIPSIME ZAKARYAN – *The Correlation Issues between Biographical and Outliving Memory (on the example of Henrik Edoyan's Poetry).* – This article is an attempt to analyze reflected in the poetry of the individual Henrik Edoyan's and the unconscious archetypes of the collective unconscious. The inherent peculiarities of Henrik Edoyan's poetic "I" and the poetic world are linked to the problem of the individual's self-recognition and self-determination, one of the main components of it being the problem of proportionating the biographic and outliving memories.

Key words: *archetype, collective unconscious, deep memory, consciousness, biography, outliving, history, Henrik Edoyan*

Ներկայացվել է՝ 19.04.2019
Գրախոսվել է՝ 06.05.2019
Ընդունվել է տպագրության՝ 04.06.2019